

**ԱՅՍՕՐ 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՆԱՀԱՏԱԿՎԱԾ ՄԻՔԱՅԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐՆ Է**

01.11.2023 18:51



Այսօր փաստաբանական համայնքի ներկայացուցիչներն այցելեցին Եռաբլուր գինվորական պանթեոն, խնկարկեցին և ծաղիկներ խոնարհեցին Արցախյան 44-օրյա պատերազմում նահատակված Միքայել Դանիելյանի շիրիմին:

Նոյեմբերի 1-ը փաստաբան Խաչիկ Դանիելյանի որդու՝ Միքայել Դանիելյանի հիշատակի օրն է:

Միքայելն անձնվիրաբար կռվել է Մարտակերտի դիրքերում, պայքարել հայ զինվորին վայել ոգով և հանուն հայրենիքի մարտնչած զինվորի հիշատակը միշտ վառ պիտի մնա ապրողների հուշերում:

Միքայել Դանիելյանը հետմահու պարգևատրվել է «Մարտական Ծառայություն» և «Արիության Համար» շքանշաններով:

**Հայրենասիրությունը նաև հայրենիքի համար գոհված հերոսների հիշատակն անմար պահելն է: Փաստաբանների պալատն իր պարտքն է համարում մշտապես լինել գործընկերների կողքին և Փաստաբանների պալատի նախաձեռնության համաձայն ամեն տարի փաստաբանական համայնքն իր հարգանքի տուրքն է մատուցելու մեր հերոսների ընտանիքներին:**

Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb\_comments\_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb\_comments\_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })